

Տեսանք վերև (էջ ԾԷ-ԾԹ), Գրիգոր և Աստուածատուր վարդապետներու յԵրուսաղէմ առ Եղիազար ուզղած 10 Յոստ. 1680 թուակիր նամակին մէջ՝ թէ Ամբակում Բէժօմիւրճեան նոյն տարուան առաջին ամիսներուն (Համբարձման տօնէն առաջ) արեղայ կը ձեռնադրուի ու կը վերակոչուի Գրիգորիս: Այն ատեն անիկա կը գտնուէր իր կեանքի քսանեմիամեակին մէջ: Իր հայրը Երեմիա Չէլէպի ու պապը Տէր Մարտիրոս կը զիմեն Զուղայեցի Յակօբ կաթողիկոսի ու կը խնդրեն որ վարդապետական իշխանութիւն տայ Գրիգորիս արեղային: Հայրապետը կը մերժէ անոնց խնդիրը՝ ըսելով թէ տակաւին «տղայ է և նոր արեղայ», ու խորհուրդ կու տայ որ նորընծան երթայ էջմիածին ու հոն կատարեալագործէ իր ուսումը կամ սորվի «զկատարելութիւն ուսման»: Բայց Գրիգորիս արեղայ կը զրկուի ոչ թէ էջմիածին, այլ Արմաշ՝ նոյն վանքին վանահօր Մարկոս եպիսկոպոսի մօտ:

Ան երկար չի մնար Արմաշի վանքը: Յաջորդ տարին (1681) զինքը կը գտնենք Զմիւռնիոյ մէջ: Երեմիա մասնաւոր գիրով մը զայն կը յանձնարարէ Ազուլեաց Պետրոս արքեպս.ին, որ Եղիազարի հանդիպելու համար գացած էր Զմիւռնիա: Երեմիա զբաժ է վերջինիս էջմիածին՝ Եղիազարի հոն հասնելէն քիչ ետք. «Մինչ զմեծութիւնդ չեւ եւս տեսեալ՝ զորդեակն իմ թղթով ի քեզ յանձնեցի ի գալն յիզմիւռնին» (Յաւել. էջ 433): Երեմիա Գրիգորիս արեղայի Զմիւռնիա գտնուած ատեն անոր գրած է նամակ մը, զոր միշտ ընթեռնուել կը պատուիրէ՝ ետքէն իր էջմիածին զրկած նամակին մէջ. «Կարգա՛ զոր գրեցի քեզ ի ստանալն քո զկուսակրօն կարգն որ ի Քրիստոսէ, ընթերցի՛ր միշտ եւ որ յիզմիւռնի գրեցի քեզ, և այլն» (Յաւել. էջ 464): Գրիգորիս արեղայ Զմիւռնիոյ մէջ կը վայելէ նաև Մատթէոս Չէլէպիի որդւոյն ու Ապրոյի թոռան՝ Պետրոս